

**ՔԻՇ ԱԶԱՏ ԳՈՏՈՒ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐՈՆ ԻՐԱՆԻ
ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հասանալի ՆԱԶԱՖԻ

ԵՊՀ կառավարման և գործարարության
ամբիոնի հայցորդ
Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր
պրոֆեսոր Ս.Լ. Ղանթարյան

Բանալի բառեր. ազատ գոտի, ներմուծում, տարածաշրջան, ապրանք, արժեք, հարկեր

Ներմուծումները ազատ գոտիների ամենավիճահարույց հարցերից են: Մի խումբ տնտեսագետների կարծիքով, ազատ գոտիները, հատկապես, Իրանի պես զարգացող երկրներում ազգային արտահանումների մակարդակը բարձրացնելու փոխարեն, դուռ են բացում արտասահմանյան ապրանքների ներմուծման համար: Իրանի ազատ գոտիներ ներմուծված ապրանքների ցուցանիշների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ ազատ գոտիներ ներմուծված ապրանքների դոլարային արժեքը բավականին բարձր է նույն վայրից արտահանված ապրանքների դոլարային արժեքից:

Քիշ ազատ գոտու ներմուծումների մակարդակի դիտարկումը ևս ապացուցում է, որ վերջին տարիներին այս տարածաշրջանի տնտեսական գործունեությունը հիմնականում բնորոշվում է ներմուծումներով: 2005-2013 թթ. Քիշ ազատ գոտի ներմուծված ապրանքների դոլարային արժեքի գնահատումը ցույց է տալիս, որ դրանք թե՛ ծավալային և թե՛ դոլարային առումով աճ են արձանագրել: Իհարկե, ներմուծումների մակարդակի բարձրացումն ինքնին բացասական երևույթ չի համարվում ցանկացած երկրի տնտեսության համար, նույնիսկ կարող է տվյալ երկրի տնտեսական վիճակի բարելավման նշանը լինել: Ներմուծվող ապրանքների որակն ու բնույթը ևս կարևոր հանգամանք են որևէ երկրի ներմուծման ոլորտի գնահատման համար:

Ըստ վերջին տարիներին Քիշ ազատ գոտու վիճակագրական տվյալների, 2006-ին այս տարածաշրջան ներմուծված ապրանքների դոլարային արժեքը կազմել է 141,000,000 դոլար, որը 33 տոկոս աճ գրանցելով 2007-ին հասել է 187,000,000 դոլարի, ինչը խոսում է Քիշ ազատ գոտու ներմուծումների վերընթաց ուղղության մասին: Նկատի առնելով Իրանի մասշտաբով

ընդհանուր ներմուծումների դոլարային արժեքի 16 տոկոս աճը, եզրակացնում ենք, որ Քիշ ազատ գոտու ներմուծումների արժեքն ամբողջ երկրի համեմատությամբ կրկնապատիկ տեմպերով է բարձրացել:

Այս վերընթաց միտումը շարունակվել է նաև 2008-ին, երբ Քիշի ընդհանուր ներմուծումների արժեքը 17 տոկոս բարձրացել և հասել է 219,000,000 մակարդակի, որը կրկին ավելի բարձր է ընդհանուր երկրի մասշտաբով ներմուծումների արժեքի աճից՝ 15.5 տոկոսից, սակայն տարբերությունը փոքր է և ավելի համաչափ են դարձել այդ երկու ցուցանիշները:

2009 թվականին կրկին շարունակվել է Քիշ ազատ գոտի ներմուծվող ապրանքների արժեքի բարձրացումը և գրանցվել է 29 տոկոս բարձրացում՝ հասնելով 282,000,000 մակարդակի: Նախորդ տարվա համեմատությամբ այս աճը ավելի բարձր է, որը շարունակվել է նաև հետագա տարում՝ գրանցելով 39 տոկոս աճ և հասնելով 393,000,000 դոլարի:

Այսպիսով, վերլուծելով 2005-2010 թթ. Քիշ ազատ գոտու ընդհանուր ներմուծումների ծավալի վերընթաց միտումը, տեսնում ենք, որ այն համաչափ դինամիզմ է ունեցել, թեև եղել են նաև որոշակի տատանումներ, սակայն հետագա տարիներում այդ տատանումները ավելի կտրուկ են արտահայտվել: 2011-ին ներմուծումները զարմանալի բարձրացում են ցույց տվել՝ մոտ 90 տոկոս և հասել 731,000,000 դոլարի: Այս ընթացքը 2012-ին խիստ նվազել և ունեցել է ընդամենը 57.5 աճ՝ իջնելով մինչև 310,000,000 դոլարի: Քիշ ազատ գոտու ներմուծումների դոլարային արժեքի այսպիսի կտրուկ տատանումները վկայում են տնտեսական անկայունության և ներմուծման որոշակի քաղաքականության բացակայության մասին:

Հաջորդ տարի 2013-ին ներմուծումների դոլարային արժեքը դարձյալ թռիչք է ունեցել և մոտ 80 տոկոս բարձրանալով հասել 559,000,000 դոլարի: 2005-2013 թթ. ժամանակահատվածում Քիշ ազատ գոտու ներմուծումների արժեքային տատանումները շատ ավելի կտրուկ ու մեծ են եղել, քան ամբողջ երկրի մասշտաբով, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսության, հատկապես, ներմուծման ոլորտի քաղաքականությունը ազատ գոտիներում առավել անորոշ է և չկարգավորված, քան բուն երկրում: Աղյուսակ 1-ում բերված է ներմուծված ապրանքների փոփոխման դինամիկան:


Աղյուսակ 1. Քիչ ազատ գոտի ներմուծված ապրանքների դոլարային արժեքը 2005-2013 թթ.(միլիոն դոլար)

Բացատրություն	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ներմուծումների դոլարային արժեքը	141	187	219	282	393	731	310	559

Դիտարկելով 2006-2011 թթ. Իրանի ներմուծումների դոլարային արժեքի փոփոխությունների ընթացքը, կարելի է հանգել հետևյալ հիմնական եզրահանգումների: Նախ և առաջ ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած փոքր տատանումներին, ընդհանուր առմամբ 7 տարիների ընթացքում շուրջ 19 տոկոս աճ է ունեցել, մինչդեռ նույն ժամանակահատվածում Քիչ ազատ գոտի ներմուծված ապրանքների դոլարային արժեքը շուրջ 296 տոկոս աճ է գրանցել (մոտ 3 անգամ ավելի շատ): Իրականում, Քիչ ազատ առևտրի տարածաշրջանի ներմուծումները անհաշիվ ու չհամակարգված կերպով շարունակաբար բարձրացել են, նույնիսկ, այն տարիներին, երբ ընդհանուր երկրի մասշտաբով նվազում է գրանցվել: Օրինակ, 2013 թվականին 2012-ի համեմատությամբ Իրանի ներմուծումների արժեքը շուրջ 3.5 տոկոս ավելի ցածր է, սակայն նույն ժամանակահատվածում Քիչ ներմուծված ապրանքների արժեքը բարձր թռիչք է արձանագրել, այսինքն բարձրացել է 80 տոկոսով, ինչը խոսում է այդ տարածաշրջանի ներմուծումների չժողոված ու տարերային ընթացքի մասին:

Ներքևում ներկայացված մեր կողմից կազմած գծապատկեր 1-ում բերված է վերջին յոթից ութ տարիների ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության Քիչ կղզու ազատ տնտեսական գոտու տարածք ներմուծվող տարբեր նշանակության լայն սպառման ապրանքների արժեքների փոփոխությունների դինամիկան, որն իր ազդեցությունն է թողել տնտեսության մյուս մակրոտնտեսական ցուցանիշների համապատասխան փոփոխությունների վրա:

Գծապատկեր 1. Քիչ ազատ գոտի ներմուծված ապրանքների դոլարային արժեքի դինամիզմը 2005-2013 թթ.



Քիչ ազատ գոտում ներկրողների համար նախատեսված հնարավորություններ:

Ցանկացած տեսակի ապրանքի ներկրումը Քիչում ազատ է (բացի այն ապրանքները, որոնք արգելված են իսլամական կրոնի օրենքով կամ այդ տարածքին հատուկ օրենքներով): Ապրանքների ներկրման համար գործում են հետևյալ պայմանները.

1. Շինարարական ապրանքներն ու շինանյութերը Ազատ գոտիների կառավարման կազմակերպության հայեցողությամբ և որոշմամբ ազատվում են մաքսատուրքերից:

2. Արտադրական ու արդյունաբերական հիմնարկների սարքավորումները, հում նյութերը և պահեստամասերը ազատ են մաքսատուրքերից:

3. Այլ ապրանքատեսակների համար պարտավոր են վճարել մաքսատուրքերը, և տրանզիտի կամ կրկնակի արտահանման դեպքում պետք է արտահանվող ապրանքի արժեքի 0.3-ի չափով վճարեն մատուցված ծառայությունների ծախսերը:

4. Թույլատրվում է ապրանքների պահեստավորումը որոշակի ժամանակով ազատ գոտու ամբարներում:

5. Իրանի ազատ գոտիներում արտադրված ապրանքների ներկրումը Քիշ ազատ գոտի ենթակա է սակագների 50 տոկոս զեղչի:

Hasanali NAJAFI

The role and place of the zone “ Kish” in the import of goods to Iran

Keywords: free zone, import, region, commodity, value, taxes

The article analyzes the dynamics of imported goods through the free zone “Kish”. Our studies suggest that the economic activities in the territory of this free economic zone during the last few years had been characterized by an increase of imported goods. The dollar value of the imported goods, as well as the volumes and the weight of goods had registered tangible increase in 2005-2013. However, it has no negative impact on the overall economy, moreover, it demonstrates some improvement in purchasing power of population.

Гасанли НАДЖАФИ

Роль и место свободной зоны “ ГИШ “ в импорте товаров в Иран

Ключевые слова свободные зоны, импорт, регион, стоимость, налоги

В статье анализируются динамика импортных товаров через свободную зону "Киш". Наши исследования показывают, что экономическая деятельность на территории этой свободной экономической зоны в течение последних нескольких лет характеризуются увеличением импортных товаров. Долларовая стоимость импортируемых товаров, а также объемы и вес товаров зарегистрировали ощутимый прирост в 2005-2013 гг. Тем не менее, это не имеет никакого отрицательного влияния на экономику в целом, кроме того, продемонстрировали некоторое улучшение покупательной способности населения.

Հասանալի ՆԱՋԱՖԻ

Քիշ ԱԶԱՏ ԳՈՏՈՒ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Բանալի բառեր. ազատ գոտի, ներմուծում, տարածաշրջան, ապրանք, արժեք, հարկեր

Հոդվածում կատարվել է վերլուծություն և քննվել է Իրանի Քիշ ազատ գոտու ազդեցությունը ներմուծվող ապրանքների նկատմամբ: Քիշ ազատ գոտու ներմուծումների մակարդակի դիտարկումը ևս ապացուցում է, որ վերջին տարիներին այս տարածաշրջանի տնտեսական գործունեությունը հիմնականում բնորոշվում է ներմուծումներով: 2005-2013 թթ. Քիշ ազատ գոտի ներմուծված ապրանքների դոլարային արժեքի գնահատումը ցույց է տալիս, որ դրանք թե՛ ծավալային և թե՛ դոլարային առումով աճ են արձանագրել: Իհարկե, ներմուծումների մակարդակի բարձրացումն ինքնին բացասական երևույթ չի համարվում ցանկացած երկրի տնտեսության համար, նույնիսկ կարող է տվյալ երկրի տնտեսական վիճակի բարելավման նշանը լինել լ: Ներմուծվող ապրանքների որակն ու բնույթը ևս կարևոր հանգամանք են որևէ երկրի ներմուծման ոլորտի զնահատման համար: